Անցեալ անգամ ես այստեղ կարդացի մեր և հակառակորդի միջև փոխանակված դրութիւնները, որոնց մէջ հոդատարութեան պայմանները կային ընդհանուր գծերով։ Այժմ բացւում է նոր շրջան, քաղաքական ուժերի նոր սիտուացիա, և որպէսզի Հայաստանի խորհրդարանը ազատ լինի ինքն իր վերաբերմունքը ցոյց տալու, իմ կառավարութիւնը ներկայացրեց իր հրաժարականը՝ ի նկատի ունենալով հանրապետութեան շահերը։

Պատգամաւոր Ս. Թորոսեան. — Հայաստանի խորհրդարանի պատգամաւորներ, սրանից վեց ամիս առաջ, մեր հանրապետութիւնը կանգնած էր ծանր օրերի առջև. մենք ընտրեցինք այժմ հեռացող կառավարութիւնը։ Այդ կառավարութիւնը պատւով դուրս եկաւ մայիսեան դէպքերի ծանր բեռի տակից։ Նա ուղիղ գծով տարաւ հանրապետութեան պաշտպանութեան գործը՝ համախմբելով դրա համար երկրի անհրաժեշտ ոյժը։ Ամառւայ վերջին դժւար սպասելի անցքեր տեղի ունեցան մեր հանրապետութեան սահմանների վրա։ Մենք գիտէինք, որ Տաճկաստանը մի օր պիտի շարժւի մեզ վրա, վերջնական մի հարուած տալու համար։ Պարզ չէր սակայն, որ այդ կը կատարւի այդքան արագ և այդքան շուտ։ Մուստաֆա Քէմալը, որ կարողացաւ իր ձեռքում կենտրոնացնել Տաճկաստանի զինական ամբողջ ոյժը, բաւական յաջողութիւններ ունեցաւ. նա յաղթանակեց։

Մեր զօրքերի յաղթելու պատճառն ունի հոգեբանական հիմք, և մենք հաւատացած ենք, որ դա շուտով և հեշտութեամբ կանցնի։ Պէտք է լինենք աւելի զգաստ և վերաքննենք քաղաքական դրութիւնը։ Ժողովուրդն ուզում է հաշտւել թուրքերի հետ և դա կը լինի։ Նա միշտ ցանկացել է հաշտւել, միշտ պաշտպանելով ինքն իրեն՝ կռւել է, սակայն, ոչ երբեք նոր նւաճումներ անելու նպատակով։

Այն կառավարութիւնը, որ վեց ամիս պայքարել է և կարողացել է անվնաս դուրս բերել երկիրը և ժողովուրդը, այսօր, քաղաքական դրութեան այլ դասաւորման պատճառով, պէտք է հեռանայ։ Կառավարութեան փոփոխութիւնը անհրաժեշտաբար պէտք է կատարւի։ Հ. Յ. Դաշնակցութեան Ֆրակցիան կառավարութեան հրաժարականը գտնում է յարգելի և ընդունում է այն։

Պատգամաւոր Խոնդկարեան. — Խորհրդարանի վերջին նիստում մենք ասացինք, որ կառավարութիւնը պէտք է տայ իր հրաժարականը։ Այդ հրաժարականը մենք ըմբռնում ենք այն ձևով, որ այսօրւանից կատարւում է պատմական մի փոփոխութիւն։ Մենք ընդունում ենք կառավարութեան հրաժարականը։ Կառավարութիւնը, անշուշտ, ունեցել է սխալներ, բայց այդ պիտի վերագրել ոչ կառավարութեան մէջ եղած անձերին, այլ տիրող սիստեմին։ Մենք հաւատացած ենք, որ մեր քաղաքական կեանքը կը կարողանայ կարող ուժեր հրապարակ հանել մեր երկրի կառավարութեան համար։

Նախագահը կարդում է Դաշնակցութեան Ֆրակցիայի առաջարկած բանաձևը. «Խորհրդարանը լսելով նախարարապետի զեկուցումը կառավարութեան հրաժարականի մասին և պատգամաւորների ճառերը՝ յարգելի է համարում, ընդունում է հրաժարականը և անցնում նոր նախարարապետի ընտրութեան»։

Առաջարկւած բանաձևն անցնում է 34 ձայնով. ընդդէմ ոչ մի ձայն, ձեռնպահ մի ձայն։

Խորհրդարանը անցնում է նոր նախարարապետի ընտրութեան։ Թերթիկներով առաջարկւում են թեկնածուներ։ Նախարարապետութեան համար թեկնածու է առաջարկւում Սիմոն Վրացեանը (նախկին գիւղատնտեսութեան, պետական գոյքերի և աշխատանքի նախարար)։